Դպրոց պարտեզի սովորողների դիմավորումը երթուղայինների կայանատեղիից, ճանապարհը

Խնդիրներ, առաջարկներ

Կրթահամալիրի երթուղայիններից առաջինները կայանատեղի հասնում են առավոտյան 08:30-32-ի սահմաններում:

Դպրոց պարտեզի դասավանդողներն ունեն գրաֆիկ, ըստ որի յուրաքանչյուրը առավոտյան 08:30-ից լինում է իր համար նշված վայրում: Եղանակային ցուրտ, անձրևոտ ժամանակ սովորողներին հավաքել խումբ-խումբ ու հետո քայլել դպրոց-ընթացքը դառնում է սովորողների մրսել-հիվանդանալու պատճառ: Սովորողներն իջնում են տաք երթուղայինից, սպասում են մինչև մի քանի մեքենա ևս գան, իջեցնեն սովորողներին, հետո քայլեն դպրոց:

Սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին քայլարշավը հաջողվեց, Բախշյան այգում պարապմունք անցկացնելը ևս արդյունավետություն էր հաղորդում դրան: Բայց հիմա այգում ավելացել են թափառող-կատաղած-սոված-հարձակվող շները, որի ապացույցը բացի երեխաների վրա հարձակվելուց, ագարակի շանը գզելն էր: Հանկարծ եթե դեպք պատահի, շունը կծի երեխեքից մեկն ու մեկին, մենք ենք պատասխան տալու ծնողին, հարցեր են առաջանալու՝ ինչու էին այդտեղ, ինչ էին անում ու այդպես շարունակ: Մենք հասկանում ենք այսպես, որ տանից քայլելով դպրոց եկող սովորողի համար պատասխանատուն ծնողն է, իսկ երթուղային նստելու առաջին վայրկյանից պատասխանատու է դպրոցը՝ երթուղայինի պատասխանատուն, դիմավորողը…: Դպրոց պարտեզի 5-րդ դասարանի Ասյայի մայրիկը պատմել էր, որ Ասյայի 9-րդ դասարանցի եղբորը Միրզոյան Գեորգիին դպրոցի հարակից շենքից դուրս գալուց կծել են թափառող շները:

Մյուս խնդիրը կապված է սովորողների նոթբուք-նեթբուքների հետ: Սովորողների մեծ մասը գալիս են նոթբուքներով, հազիվ են կարողանում բերել գործիքը: Հաճախ դիմավորող-ճանապարհող պատասխանատուներն են հավաքում իրենց ուսերին նոթբուքներն ու էլի ճկրթալով գալիս:

Այգուց դպրոց հատվածի թեք ճանապարհի խնդիրը լրիվ այլ է: 08:30-ից թաղամասի մեքենավոր բնակիչները շտապում են աշխատանքի: Ներքևից գալուց թափ հավաքած են գալիս, որ կարողանան դիքը բարձրանալ, այդ դեպքում երբ սովորողները ոտքով-զբոսնելով այդ հատվածով քայլում են ներքևից եկող մեքենան դժվարանում է վերջին պահին կտրուկ արգելակել: Նույնը վերևից եկող մեքենաների համար, թեքվելու հատվածից չի երևում ներքևից եկող մարդը-երեխան: Նույնը կրկնվում է երկարօրյա ուսուցումից հետո սովորողներին ճանապարհելու ժամանակ, երբ Բ4 թաղամասից քայլում ենք երթուղայինների կայանատեղի:

Ունենք ծնողների մեծ մասի դիմումները վերը նշված նույն պատճառների մասին, դրա համար բողոքում են, չեն ուղարկում դպրոց, ուզում են տեղափոխել սովորողին: Ծնողին եթե անգամ պատասխանենք, որ չեք ուզում մի ուղարկեք կամ հանեք դպրոցից լուծում չի տա: Կից ուղարկում ենք պատահական ֆիքսված կադրեր:

Ստորագրողներ՝ Դպրոց պարտեզի դասավանդողներ